ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 677*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Անհատ ձեռնարկատեր Քրիստինե Թադևոսյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար:*

*2. Անհատ ձեռնարկատեր Քրիստինե Թադևոսյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, Մայիսի փողոց 9, 51/97, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Գործարանային 36, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 հուլիսի 2020թվականի N 678*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Բուղենիկ Գաբրիելյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝երրորդ եռամսյակի համար:*

*2.Անհատ ձեռնարկատեր Բուղենիկ Գաբրիելյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր 52, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր 52, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 հուլիսի 2020թվականի N 679*

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ և 4-րդ կետերի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Մարո Անդրիասյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման և հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն ԱՏՇ հանրակացարան, սենյակ 137 գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց թիվ 13/1, հանրային սննդի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 հուլիսի 2020թվականի N 680*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Անհատ ձեռնարկատեր Վահան Լևոնյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ երկրորդ կիսամյակի համար:*

*2. Անհատ ձեռնարկատեր Վահան Լևոնյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝երկրորդ կիսամյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 20/5, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, 20/1, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 681*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 36 մասնագիտական եզրակացությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 441ա տան բնակչուհի Աստղիկ Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 17/4 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 31.54քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 31.54քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 682*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 37 մասնագիտական եզրակացությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 441ա տան բնակչուհի Արմիկ Կարապետյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 17/3 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 24.92քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 24.92քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*

*2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 683*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով 2020 թվականի հուլիսի 7-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «Աշոտ Հակոբյան» ԱՁ-ի կողմից չափագրված շինության հատակագիծը և Շողիկ Չիլինգարյանի 2020 թվականի հուլիսի 29-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>*՝

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 27 շենքի թիվ 4 բնակարանի բնակչուհի Շողիկ Արամի Չիլինգարյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N31052018-07-0075, ծածկագիր՝ 3FR4J1BMV71A) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 344.72 քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքը:*
*2.Սույն որոշման 1-ին կետում օրինական ճանաչված առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի օրինականացման վճարը սահմանել՝ 1173000 (մեկմիլիոն մեկ հարյուր յոթանասուներեք հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*
*3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի*

*համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*
*6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 հուլիսի 2020թվականի N 684*

### *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «Աշոտ Հակոբյան Գուրգենի» ԱՁ-իկողմից չափագրված շինության հատակագիծը և Արթուր Սողոմոնյանի լիազոր անձ Վահե Պետրոսյանի 2020 թվականի հուլիսի 27-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ ՝</u>*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Խանջյան փողոց թիվ 28 տան բնակիչ Արթուր Վոլոդյայի Սողոմոնյանի կողմից Հրազդան քաղաքի Խանջյան փողոց N 28 հասցեում գտնվող,սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական 1764950, տրված՝ 2011 թվականի ապրիլի 21-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցած 8.19 քմ արտաքին մակերեսով առաջին հարկը:*

*2.Սույն որոշման 1-ին կետում օրինական ճանաչված բնակելի տան առաջին հարկի օրինականացման վճարը սահմանել 14000 (տասնչորս հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային*

կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

29 հուլիսի 2020թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 685*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 38 մասնագիտական եզրակացությունը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 80 շենքի թիվ 36 բնակարանի բնակիչ Փառիկ Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 70/33 հասցեում գտնվող, Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 54.72քմ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում բնակելի նշանակության 54.72քմ արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական և գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:*
*2. Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*
*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*29 հուլիսի 2020թվականի N 686*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Միեր Մկրտչյանի 2020 թվականի հուլիսի 29-ի դիմումը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 69 տան բնակիչ Միեր Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող(սեփականության իրավունքի գրանցման վկայական 1936893, տրված՝ 2005 թվականի հունվարի 25-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Վարդան Մամիկոնյան փողոց, 1-ին նրբանցք 4:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*29 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*30 հուլիսի 2020թվականի N 687*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N190-Ն որոշումը՝*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1.Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսային մասում ՝ 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Մաքսատուրք» /4822/ հոդվածում «2000.0» թիվը փոխարինել «1950.0» թվով, «Համայնքային տուրքեր» /4824/ հոդվածում «0» թիվը փոխարինել «50.0» թվով:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*30 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*30 հուլիսի 2020թվականի N 688*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 31 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2020 թվականի հուլիսի 28-ի N 1110 գրավոր առաջարկությունը և Արամ Աբելյանի, Արփինե Աբելյանի կողմից տրված 2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 393 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 165/1 հասցեում գտնվող՝ 99.44քմ մակերեսով տնտեսական շինությունը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զ.Անդրանիկի պողոտա 165/1 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 99.44քմ մակերեսով տնտեսական շինությունը գինը սահմանել 259000 /երկու հարյուր հիսունինը հազար/ դրամ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22072020-07-0118, գաղտնաբառ՝ Y8EQNBC38FGF/ և նույն հասցեում գտնվող տնտեսական շինության համար առանձնացված 119.0քմ մակերեսով հողամասը 148000 /մեկ հարյուր քառասունութ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձանց՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 207 տան բնակիչ Արամ Աբելյանին և Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 48/3*

շենքի թիվ 16 բնակարանի բնակչուհի Արփինե Աբելյանին (այսուհետ գնորդներ):
3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով տնտեսական շինության համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:
4.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հուլիսի 2020թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 689*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 28.81 քմ մակերեսով 0513-0031 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 22/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *ՈՐՈՇՈՒՄ*

*31 հուլիսի 2020թվականի N 690*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 152.0 քմ մակերեսով 0442-0055 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 16/14:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 691*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 48.00 քմ մակերեսով 0458-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս , Տիգրան Մեծի փողոց 12/2:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*31 հուլիսի 2020թվականի N 692*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 24.0 քմ մակերեսով 0455-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 29/17:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 693*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 24.00 քմ մակերեսով 0439-0064 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս , Տիգրան Մեծի փողոց 27/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 694*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 36.00 քմ մակերեսով 0439-0064 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 27/2:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 695*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 36.00 քմ մակերեսով 0458-0101 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 20/7:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 696*

### *ՆԵՐՍԵՀ ՌԱԶՄԻԿԻ ՂԱԴԻՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի.*

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 108 շենքի թիվ 29 բնակարանի բնակիչ Ներսեհ Ռազմիկի Ղադիմյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 28112019-07-0019, ծածկագիր՝ TMKYIKBCTC46) Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 8-րդ փողոց 23/1-2 հասցեում գտնվող 0.002 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 հուլիսի 2020թվականի N 697*

## *ՍԱՐՈ ԿԻՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 5 արձանագրությունը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1. Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 302-րդ շենքի 58-րդ բնակարանի բնակչուհի Կարինե Գրիգորի Կոստանդյանին նշանակել իր որդու՝ Սարո Կիմի Խաչատրյանի /ծնված՝ 27.05.1989թ./ նկատմամբ խնամակալ:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Գրիգորի Կոստանդյանին որոշման ընդունման մասին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*31 հուլիսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*03 օգոստոսի 2020թվականի N 698*

## *ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 190-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 29/քսանինը/ անապահով բնակիչների դիմումները՝*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 190-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 354000/երեք հարյուր հիսունչորս հազար/ դրամ հատկացնել Հրազդան համայնքի թվով 29 /քսանինը/ անապահով բնակիչների՝ համաձայն հավելվածի:*

*2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*03 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2020 թվականի օգոստոսի 03-ի
N 698 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Հասցե | Գումար |
|---|---|---|---|
| 1. | Փիրումյան Մաշա | Կենտրոն 47/15 | 20000 |
| 2. | Միքայելյան Էլյանորա | Միկրոշրջան 42/38 | 15000 |
| 3. | Խախանյան Կամո | Ջրառատ 464 | 20000 |
| 4. | Մկրտչյան Աշոտ | Կենտրոն 47/13 | 20000 |
| 5. | Սարգսյան Հերմինե | Միկրոշրջան 233/4 | 20000 |
| 6. | Խաչատրյան Վահան | Շահումյան փողոց տուն 167 | 9000 |
| 7. | Սարկիսյան Մարիետտա | Միկրոշրջան 61/26 | 5000 |
| 8. | Պողոսյան Գեվորգ | Ջրառատ տուն 476 | 5000 |
| 9. | Առաքելյան Ամալյա | Միկրոշրջան 233/46 | 10000 |
| 10 | Ղազարյան Հրանուշ | Վանատուր տուն 459 | 10000 |
| 11 | Ստեփանյան Թեմուր | Միկրոշրջան 11/32 | 10000 |
| 12 | Խաչիկյան Աշոտ | Միկրոշրջան 233/18 | 10000 |
| 13 | Մարգարյան Լուսաբեր | Միկրոշրջան 265/4 | 20000 |
| 14 | Հայրապետյան Անի | Միկրոշրջան տնակ 6/4 | 10000 |
| 15 | Վարդանյան Գուրգեն | Կենտրոն 5/6 | 10000 |
| 16 | Խաչատրյան Արմիկ | Չարենցի փողոց տ 27 | 10000 |
| 17 | Հովհաննիսյան Լուսիկ | Երևանյան փողոց 4/5 | 10000 |
| 18 | Գալստյան Խաչիկ | Միկրոշրջան 227/7 | 5000 |
| 19 | Եղիազարյան Վոլոդյա | Վանատուր 122 | 5000 |
| 20 | Եփրեմյան Մարինե | Կենտրոն 25/6 | 20000 |
| 21 | Վարտանյան Համեստ | Միկրոշրջան 233/35 | 20000 |
| 22 | Թադևոսյան Ալվարդ | Շինարարների փողոց տ 84 | 10000 |
| 23 | Թումանյան Լուսինե | Միկրոշրջան 44/38 | 10000 |
| 24 | Միքայելյան Վյաչեսլավ | Միկրոշրջան 42/38 | 15000 |
| 25 | Բետանո Անահիտ | Միկրոշրջան 24/1 | 5000 |
| 26 | Ծահրադյան Էմմա | Կենտրոն 38/138 | 10000 |
| 27 | Խաչով Երջանիկ | Միկրոշրջան 84/32 | 20000 |
| 28 | Սարգսյան Վալյա | Տեխնիկումի հանրակաց□ 228 սենյակ | 10000 |
| 29 | Թադևոսյան Անուշ | Շինարարների փողոց 82 | 10000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 354000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 օգոստոսի 2020թվականի N 699*

## *ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Գուրգեն Հարությունյանի 2020 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Գուրգեն Հարությունանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 03082020-07-0095, ծածկագիր՝ LFHGABADAA6B և N 03082020-07-0034, ծածկագիր՝ 2CJ79LNBQLZB/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս, Մ. Բաղրամյան փողոց, 3-րդ նրբանցք 13 և 13/1 հասցեներում գտնվող միավորված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Մ. Բաղրամյան փողոց, 3-րդ նրբանցք 13,13/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 օգոստոսի 2020թվականի N 700*

### *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գեղամ Աբրահամյանի 2020 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 2 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Գեղամ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2186353, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր Նորակառույց թաղամաս, Պուրակային փողոց, 5-րդ նրբանցք 5:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 օգոստոսի 2020թվականի N 701*

*ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ֆելիքս Աբրահամյանի 2020 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 156 տան բնակիչ Ֆելիքս Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2186327, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր Նորակառույց թաղամաս, Ուրականյին փողոց, 5-րդ նրբանցք 7:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 օգոստոսի 2020թվականի N 702*

### *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Աբրահամ Աբրահամյանի 2020 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.*

### *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի նրբանցքի թիվ 6 տան բնակիչ Աբրահամ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2308989, տրված՝ 2007 թվականի մարտի 19-ին) Հրազդան քաղաքի Սպանդարյան և Կոստանյան փողոցներին հարող տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 74:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*04 օգոստոսի 2020թվականի N 703*

## ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Դերենիկ Պողոսյանի 2020 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի նրբանցքի 12/1 տան բնակիչ Դերենիկ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2563466, տրված՝ 2009 թվականի մարտի 26-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 42 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 42/15:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 օգոստոսի 2020թվականի N 704*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2020 թվականի հունիսի 8-ի թիվ 28 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2020 թվականի հուլիսի 30-ի N 1127 գրավոր առաջարկությունը և Սարգիս Սարգսյանի կողմից տրված 2020 թվականի հուլիսի 31-ի թիվ 396 գրավոր համաձայնագիրը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հարավային թաղամասի Մ. Ավետիսյան փողոց 13/1 հասցեում գտնվող՝ 52.8քմ մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:*

*2.Հրազդան քաղաքիՀարավային թաղամասի Մ. Ավետիսյան փողոց 13/1 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 52.8քմ մակերեսով անասնաշենքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23072020-07-0126, ծածկագիր՝ NDCBKWTN84PY/ գինը սահմանել 222000 /երկու հարյուր քսաներկու հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 135.87քմ մակերեսով հողամասը 400000 /չորս հարյուր հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասի թիվ 26 տան բնակիչ Սարգիս Սարգսյանին (այսուհետ գնորդ):*

*3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով անասնաշենքի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը թիվ 900125001140 գանձապետական հաշիվներին:*

*4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*04 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*04 օգոստոսի 2020թվականի N 705*

### *ԷԴՎԱՐԴ ՍԱՐԻԲԵԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի մայիսի 25-ին կազմված վարչական իրավախախտման արձանագրության հիման վրա: Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Աղբյուրակ թաղամասի Չարենցի նրբանցք 25-րդ տան բնակիչ Էդվարդ Սարիբեկի Խաչատրյանը Հրազդան քաղաքի Ծովինար լճի ափամերձ տարածքում լցրել է մի քանի մեքենա շինարարկան աղբ, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի հատկանիշներով, այն է՝ <<3. Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս՝..... 9) մեկից ավելի խորանարդ մետր ծավալով շինարարական աղբ թափելը, որն առաջացնում է տուգանք ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով>>: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Էդվարդ Խաչատրյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը:*

*Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածով, 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 3-ի ժամը 11:00-ի նիստի N 12 արձանագրությունը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1. Էդվարդ Սարիբեկի Խաչատրյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք **80.000** դրամ գումարի չափով:*

*2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ **900125001488:***

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Սարիբեկի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*04 օգոստոսի 2020թ*

*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*05 օգոստոսի 2020թվականի N 706*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի N 383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 01-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N383 որոշման N64 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*05 օգոստոսի 2020թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավարի
2020 թվականի օգոստոսի 05-ի
N 706 որոշման

Հավելված N 64
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավարի
01.07.2016թ. N 383 որոշման

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

3 . 2-16
(ծածկագիր)

### 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) 1-ին կարգի մասնագետի (այսուհետ՝ 1-ին կարգի մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբում:
2. 1-ին կարգի մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

### 2.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. 1-ին կարգի մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:
4. 1-ին կարգի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. 1-ին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի գլխավոր կամ առաջատար մասնագետներից մեկը՝ քարտուղարի հայեցողությամբ:
Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի առաջին կարգի մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
6. 1-ին կարգի մասնագետը՝
ա) 1-ին կարգի մասնագետը աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
բ) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները, կազմում է իրավական, վարչական ակտեր
գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:
դ) մասնակցում է հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի աշխատանքներին, իրականացնում է լիազորություններ դատարանում և հարկադիր կատարման մարմիններում.

### 3.ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. 1-ին կարգի մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

### 4.ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. 1-ին կարգի մասնագետը՝
ա) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.
բ) աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.
գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի: